

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարտ ամսոյ սկիզբները երկու հանրագրութիւններ պատրաստուեցան ներկայացուելու համար Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորին: Այդ հանրագրութիւններէն մին ստորագրուած էր Յորդանան գտնուող 28 Միաբան հայերու եւ Սարկաւազաց 22 ին կողմէ: Իսկ միւսը աւելի քան 2000 չափահաս հայերու կողմէ երուսաղէմէն, Ամմանէն եւ շրջականերէն: Միաբանութեան ղեմումնագրին մէջ նախ շնորհակալութիւն կը յայտնուէր որ Նորին Վեհափառութիւնը «կը վերանկատէ խնդիրը Տիրան Արքազանին, զոր մենք 1957 Մարտ 20 ին պատրիարք ընտրեցինք, մեր Սահմանադրութեան եւ կանոններուն համաձայն. աւանդական եղանակաւ, գաղտնի քուէարկութեամբ եւ ազատօրէն, մեր Միաբանական Ընդհ. Ժողովոյ հանդիսաւոր նիստին մէջ»: Եւ խնդրանք կ'ըլլար որ Տիրան Արքազան մնար երկրին մէջ:

Իսկ Ժողովրդային հանրագրութեան մէջ ի միջի այլոց կ'ըսուէր որ «Տիրան Արքեպիսկոպոս, որ պատրիարք ընտրուած է, մեզի համար վստահելի անծ մըն է... ան համայն հայութեան բարձր համարումը վաշխող հոգեւորական մըն է. հմուտ է մեր կրօնքին եւ կ'աշխատի ժողովուրդի օգտին համար: Ան հակառակ է կործանարար ուժերու որոնց նպատակն է կրօնքն ու եկեղեցին քայքայել: Ուստի կը խնդրենք Ձեր Վեհափառութենէն նկատի առնել Տիրան Արքազանի խնդիրը, որպէսզի ան մնայ հովիւ իր հօտին եւ պահապանը Ս. Աթոռոյս կանոններուն եւ անկախութեան»:

Այս հանրագրութիւնները անծամբ պալատ յանձնուեցան Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Եպս. ի կողմէ Մարտ 20 ին: Իսկ անոնց լուսահանեալ պատճէնները յանձնուեցան Վարչապետարան, Ներքին Գործոց, Արտաքին Գործոց եւ Պաշտպանութեան Նախարարներուն:

Մարտ 25 ին, Տիրան Արքազան եւ Սուրէն Արքազան երուսաղէմի Կառավարիչին հրաւերով Կառավարչատուն գացին, ուր

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շք. 1 Մարտին, Ս. Թէոդորա զօրավարի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրա. վանքի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ:

Նոյն օրը կէսօրէ վերջ, յաջորդ օրուան Ար. տաճարն Կիւսկիի առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս., Բէմհանեանի զխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամաստան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ Նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Որբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս, Թափօրապետն էր Հոգ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիէան:

Յաջորդ օրը, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութենէն եւ մատուցուած Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երրադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ ապա Պատ. Նատեղւոյն շուրջ՝ Նախադահլութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Բէմհանեանի:

6 Մարտ Հինգշաբթի իրիկուն, Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց «Հսկում»-ի արարողութեան ընթացքին Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան քարոզեց մեղքի ու ապաշխարութեան խորհուրդին շուրջ:

Քաղաքիս Վսեմ. Կառավարիչը պաշտօնապէս յայտնեց թէ Տիրան Արքազանի արարման հրամանը յետս կոչուած է: Միաժամանակ հաւաստիք տուաւ վանական իշխանութեան՝ թէ Ժողովուրդին մէջ կարգ ու կանոնի եւ խաղաղութեան պահպանման համար Կառավարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէ, երբ պէտք ըլլայ: Արքազանները վերադարձան Վանք՝ գոհունակ սրտով, Կառավարիչին կողմէ ցուցուած բարեացակամ տրամադրութեան համար:

Տիրան Արքազանի տարագրման հրամանին հետեւանքով յառաջ եկած անորոշութիւնը Պատրիարքարանի վարչութեան նկատմամբ Կառավարութեան ղիրքին մասին, տակաւին կը մնայ:

Սակայն կը յուսանք որ այս անորոշութիւնն ալ վերջ պիտի գտնէ մօտիկ ապագային:

ԴԻԻԱՆ Ս. ԱԹՈՒՌՑ

8 Մարտի Շարաթ օրը, Ս. Կիւրդի երեսօղիմայ հայրապետի տունին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ստեփանոս մատրան Ս. Կիւրեղ Հայրապետի անունն նուիրուած Սեղանին վրայ, ուր մինչև օրս կը պահուի մկրտուած թեան այն աւագանը՝ ուր Կիւրեղ Հայրապետ 350ական թուականներուն, Ս. Խաչի երեսուէն վերջ, հաղարաւոր հեթանոսներ դարձի բերաւ և մկրտեց, Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ երանանդոր՝ Տ. Կիւրեղ Բ. Պատրիարքի հոգւոյն համար, իւր գերեզմանին վրայ, Ս. Յակոբեանց Տաճարի գաւիթին մէջ:

9 Մարտ Անառակի Կիրակին, ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Պատարագեց Նոգ. Տ. Ներսէս Արղ. Բապտիստան և քարոզեց Նոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան՝ մեկնաբանելով Անառակ Որդիի աւետարանական առակը:

Ել. 13 Մարտի իրիկուան «Հակում»-ին քարոզեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, խաղաղութեան մասին:

16 Մարտ Տճեմի Կիրակին, փակեալ-խորանի Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, Նոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան քարոզող մը մեկնաբանեց Տնտեսի աւետարանական առակը ու անդրադարձաւ դրամին մեր կեանքին մէջ ունեցած դերին մասին:

Ել. 20 Մարտի իրիկուան «Հակում»-ին քարոզեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան, բնաբան ունենալով «Ձանթեթեթիւնս իմ ես ինձէն զիտեմ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ»:

Եր. 22 Մարտի կէսօրէ վերջ, յաջորդ օրուան Դասաւորի Կիրակի առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»-ով նուազ գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր հայապատկան Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատուակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Նոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան:

Յաջորդ օրը, Ս. Յարութեան Տաճարի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութիւնէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և ապա նախագահեց Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրին:

Ել. 27 Մարտի իրիկուան «Հակում»-ին Գեր. Տ. Շնորհք Եպս. Դաւիթեան քարոզեց աղօթքի անհրաժեշտութեան մասին:

Եր. 29 Մարտ, Ս. Գր. Լուսաւորիչ Մուսնի վիճակ տունին առթիւ, առաւօտեան ժամերգութիւնէն ետք Ս. Լուսաւորիչ մատուցեց թափօրով փոխադրուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորան: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Ստեփանոս մատրան Ս. Գր. Լուսաւորիչ նուիրուած խորանին վրայ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Ք

Դչ. 25 Փետր. կէսօրէ առաջ ժամը 11.30ին, Իրաքի Խորհրդարանի անդամներ և պետական անձնակազմութիւններ այցելեցին Ս. Յարութեան Տաճար՝ որու մուտքին ընդունուեցան երեք յարանուանութեանց ներկայացուցիչներուն կողմէ: Մեր կողմէ ներկայ էին Տաճարի Տեսուչ՝ Նոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Տեփոյեան, Ս. Տեղեաց Քարտուղար՝ Նոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան և Նոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

Աւր. 28 Փետրուարին, Արաքական Զարթօնքի տունին առթիւ, Երուսաղէմի բոլոր հասարակութեանց սկստւական խումբերը մասնակցեցան կազմակերպուած մեծ տողանցքին՝ զխաւորութեամբ պետական ֆանֆառին: Սոյն տողանցքին մասնակցեցան զաղութիւն Միութեանական խմբակները, ինչպէս նաև Ս. Թարգմանչաց Վարժարանի Սկստական խումբը:

Եր. 1 Մարտ կէսօրէ առաջ ժամը 11ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Նոգ. Տ. Վազգէն Արղ. Դրպրբախեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ Հարամ Եկրիֆի մէջ՝ հանդ. Հիւսէյն Ա. Թագաւորի շիրմին վրայ կատարուած յիշատակի հանդէսին, որմէ ետք Ալիզաֆի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Կիր. 2 Մարտ կէսօրէ վերջ ժամը 5ին, Ֆրանչիսկեանց Կիւսթոսի հրաւերին ընդառաջելով, Միաբան Հայրեր Նոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի զխաւորութեամբ, ներկայ եղան Ֆրէրներու վարժարանի սրահին մէջ Ս. Պէրնատէթի հարիւրամեակին առթիւ օարքուած երաժշտական և ներկայացման հանդէսին:

Եր. 8 Մարտ իրիկուան ժամը 6ին, ընդառաջելով քաղաքիս երեւելի ղեմքերէն Տիար Անվար Նուսէյպիի հրաւերին, Ամպասատոր Պանդոկին մէջ, ի պատիւ Տիար Ս. Ն. Քօչէնտէլիֆէրի (Վարիչ արտաքին յարաբերութեանց Անդր-Ովկիանոսային օդային հաղորդագրութեանց) տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Նոգ. Տ. Վազգէն Արղ. Դրպրբախեան և Տիար Կարպիս Հինդլեան:

Դչ. 12 Մարտին, յանուն Պատրիարքարանիս, Նոգ. Տ. Վազգէն Արղ. և Տիար Կարպիս Հինդլեան շնորհաւորութեան զայցին Քաղաքիս կեդր. Ոստիկանատունը՝ փոխ-գնդապետ Տիար Իպրահիմ Քրէյլանի պաշտօնի բարձրացման առթիւ:

Եր. 15 Մարտ իրիկուան ժամը 6.30ին, ընդառաջելով Քաղաքիս Ոստիկան Դրամատան կողմէ եղած հրաւերին, Ամպասատոր Պանդոկին մէջ, ի պատիւ Տէր և Տիկին Լորտ Լէյթմիքերի (Նախագահ Օսմանեան Դրամատան) տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Նոգ. Տ. Վազգէն Արղ. Դրպրբախեան և Տիար Կարպիս Հինդլեան: